

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

Իրական պրոլետարիատ. — Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Հայոց թատրոն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իրանցիական և հողային խն-
դերը. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ.—ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ.—ՅԱԵՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ՖԵԼԻՍՏՈՒՆ.

ԻՊԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ

I

Տասն և հինգ տարի կայ արդէն որ Ան-
գլիոյ կառուցած գոյութիւնն ունեն հայոց օ-
րինդակական դպրոցները, տասն և հինգ
տարի սրանից առաջ հիմնվեցաւ առաջին
հայոց օրինդակայ դպրոցը Թիֆլիսում: Բայց
այդ ամբողջ ժամանակայ ընթացքում
ի՞նչ դրական արդիւնք տուեցին մեր հա-
սարակաց կեանքին այդ իրական դպրոց-
ները:

Մենք չենք հերքում որ մասամբ այդ
դպրոցները մեծ օգուտ տուեցին, այն է
տարածեցին մեր ազգի իրական սեռի մէջ
մայրենի լեզուի գործածութիւնը.—բայց
մի ուրիշ շօշափելի արդիւնք կամ օգուտ
այդ դպրոցներէն մենք չենք տեսնում:

Մշակի՞ ընթացողները տարիներ ըն-
թացքում ընտելացել են արդէն այն իրո-
ղութեանը որ «Մշակը» չը գիտէ կեղծել,
կեղծաւորել, չէ սիրում այլ և այլ նպա-
տակների համար ծածկել հասարակու-
թեան այս կամ այն պահանջները: Հա-
սարակութիւնը միշտ սպասում է մեղանից,
որ մենք բացարձակապես ստեղծ մեր մտա-
ծածը, մեր տեսածն ու իմացածը.—և այդ
պատճառով անկողմնապահ, անկեղծ կեր-
պով հետադարձելով, քննելով հայոց իրա-
կան դպրոցների տասն և հինգ տարվայ
գոյութեան վերջնական արդիւնքը, չենք

կարող, ձեռք խղճի վրա դրած, չը խոստո-
ւածվել որ մեր իրական դպրոցները մա-
սամբ և մեծ փաստ հասցրին մեր հասարա-
կութեանը:

Բացարձակ մեր միտքը: Մեր իրական
բոլոր դպրոցները մինչև այժմ եղել են մի-
միայն ընդհանուր կրթողական հաստա-
տութիւններ, զուրկ որ և է գործնական
արհեստ, փեշակ սովորեցնող, հաց տուող
գասաւորութեան առարկայից: Այդ տեսակ
ուսումը մանուկները մայրենի լեզուով, գո-
ցէ և շատ յարմար էր այն օրինդների
համար, որոնք պատկանում են մեր բուր-
ժուական, քիչ թէ շատ ունեւոր դասա-
կարգին: Ընդհանուր տարրական, սկզբնա-
կան, կամ միջնակարգ ուսում ստանալու
յետոյ, այն էլ մայրենի լեզուով ունեւոր ըն-
տանիքի անդիւր վերադառնում էր տուն,
կարող էր տանը հանգիստ ապրել սպասել
յարմար փեսացուի, այնուհետև մարդու գնալ,
կին և մայր դառնալ: Եթէ մեր երեւելի
մանկավարժների նպատակն էր հիմնելով և
զերկարելով մեր իրական դպրոցները
կրթված մայրեր պատրաստել.—այդ
տեսակ նպատակին նրանք կարող էին ի-
րանց հասած համարել միմիայն մեր քիչ
թէ շատ ունեւոր դասակարգի օրինդների
վերաբերմամբ: Բայց մեր դպրոցներում ու-
սում առնող և ուսում աւարտող օրինդ-
ների մեծամասնութեանը, որոնք պատկա-
նում են, զժբարդապէս չբաւոր դասակար-
գին, ի՞նչ էր տալիս մեր օրինդաց դպրո-
ցը.—կարող ենք ամենամեծ վստահու-
թեամբ ասել ոչ ինչ:

Մեր իրական դպրոցը ոչինչ արհեստ,
հաց տուող ոչ մի առարկայ չէ սովորեց-
նում իր սանուհիներին և ահա ուսում ա-
ւարտած հայ չքաւոր անդիւր, որ մի փի-
նասը, մի լուսացարարի, մի հացթուխի,
մի դռնապանի անդիւր է, մեր օրինդա-

կան դպրոցում ուսում աւարտելուց յետոյ
չպրտվում է կեանքի մէջ առանց ան-
ձնապաշտպանութեան որ և է գէշքի, չը
գիտենալով որ և է գործ, որ և է ար-
հեստ, փեշակ իր զուրկ կեանքի մէջ
պահելու համար, իր ընտանիքին իր աշ-
խատանքով պէտքական լինելու համար,
կատարելապէս անպատրաստ գոյութեան
մեծ և ծանր կռի համար: Այդ դեռ բա-
ւական չէ: Գարոցը մասամբ և փչացրել է
նրան, մոլորեցրել է նրան՝ ոչինչ գործնա-
կան բան չը սովորեցնելով նրան, որով նա
համ իր զուրկը, համ էլ իր ընտանիքը
կարողանայ պահպանել, և մի և նոյն ժա-
մանակ անգիտակցաբար ներշնչելով նրա
մէջ նոր ձգտումներ, գարգացնելով նրա մէջ
նոր ճաշակներ, իր գիւրքից բարձր ցանկու-
թիւններ, կենսական աւելի ընդարձակ
պահանջներ և իսպառ օտարացնելով նրան
իր ընտանիկան շրջանից: Մի դռնապանի,
մի լուսացարարի անդիւր, մեր իրական դը-
պրոցներում ուսում աւարտելուց յետոյ
զատնում է մի օրինդ, նա արդէն զըզ-
վում է իր հօրն ու մօր շրջանից, նրանց
պարագանքից, ստոր դիրքից, բայց և
ինքն էլ մի այնպիսի առարկայ չէ սովորել
որ կարողանայ իր սեփական աշխատանքով
իր կտոր հացը ձարելու, իր ընտանիքը
պահելու, այդ ընտանիքն էլ իր ստոր դը-
րութիւնից բարձրացնելու, իր աւելի լայն,
ընդարձակ ձգտումներին բաւականութեան
տալու: Եթէ նա հաստատ կամքի, հաստատ
ընտրութեան տէր անդիւր չէ.—նրան սպա-
սում է գոցէ բարոյական անկուններ, որի շա-
ղով ընկնալով միայն նա կարող է հասնել
իր ցանկացած նպատակին, դպրոցում նրա
մէջ ծնեցրած ցանկութեանը աւելի լայն,
աւելի մեծ կոնֆորտապարելու... Նա, դըռ-
նապանի, կամ լուսացարարի անդիւր, գար-
ձել է կրթված օրինդ, նա այլ ևս չէ

կարող իր հօրն ու մօր պէս ոչ աղախին,
ոչ էլ լուսացարար լինել, բայց մի և նոյն
ժամանակ դպրոցը նրան տուել է կեանքի
կռի համար մի անպէտք կրթութիւն:

Շատ շատ նա կարող է ապրելու իրա-
ւունք ունենալու համար դառնալ, թէկուզ
շատ չնչին ուժիկով, վարժուհի նոյն
հայոց իրական դպրոցներից միում, որոն-
ցից միում նա իր կրթութիւնն է ստացել:
Բայց վարժուհի դառնալը անողովում է
շատ քեղին. այդքան բազմաթիւ չեն վար-
ժուհիների տեղեր, այդքան բազմաթիւ
չեն և իրանք դպրոցներ... Իսկ մեծամաս-
նութիւնը, մասամբ ուսում աւարտելուց
յետոյ փողոց է շարժվում նոյն իսկ այն
դպրոցի ձեռքով, որի կողմէն դատարի
ֆրազներ արտասանող մանկավարժների
վկայութեամբ մայրեր պատրաստելն
է... Կարծես թէ բաւական է որ մի աղ-
քատ աղջիկ մի որ և է Կայանեան կամ
Անանեան դպրոցում ուսում աւարտի, որ-
պէս զի անմիջապէս մարդու գնայ: Եւ
մեծ մասը դրանցից չեն էլ պատվովում ա-
մենեկին, իրանց ամբողջ կեանքում:

Վերջապէս ուսում հետ պէտք է պատվին
նրանք, իրանց ընտանիքին պատկանող շըր-
ջանի մարդու հետ, մի դռնապանի, մի
փինասը, մի արուեստագործ հետ հայոց ի-
րական-դպրոցում կրթված օրինդը չի
պատվի և ի՞նչ կին կարող է լինել նա մի
չքաւոր, կոպիտ, իր աշխատանքով ապրող
արհեստագործի համար.—իսկ իր շրջանից
բարձր, ինտելեկտիւային պատկանող մարդը
(քանի որ նա ինքն էլ այժմ ինտելեկտիւային
է պատկանում) չի պատվի մի աղքատ,
ստոր շրջանից դուրս եկած, բայց դպրո-
ցական ուսման շնորհով կրթված լինելու
վրա պրէտէնզիա ունեցող անդիւր
հետ:

Գարոցը խել է աղջկան իր ստոր շըր-

Ֆ Ե Լ Ի Ե Տ Օ Ն

Հինգերորդ և տասն և իններորդ դարի հայերը:
—Մովսէս Խորենացի.—Մովսէս Խորենացու գրքի
«Ողբում եմ քեզ հայոց աշխարհ» գլուխը.—Որ-
քան առաջադիմութիւն են արել հայերը.—Ալեք-
սանդր Ներսիս.—Աւետիս Ալաւանտի նամակը.
—Ալեքսանդր Նալբանդի նամակը.—Սպանդար
Սպանդարեանի և Պետրոս Սիմեոնեանի առաջ-
նորդող յորդանանից.—Ազգայն Թովմանիսեան,
Ալեքսանդր Ներսիս և Արթուր Լէյստ.

Այն, որքան մեծ առաջադիմութիւն է արել
հայոց ազգը հինգերորդ, ոսկ և այ անուանված
դարից մինչև այժմ.—չէք կարող ձեռք երևակայել,
ընթացող:

Հինգերորդ դարում կար հայերի մէջ մի մարդ,
Մովսէս Խորենացի անունով, որ իր գրուած-
քի մէջ յանգնեցաւ հայ հոյեւել ամբողջ հայոց
ազգը:

Ան ինչպէս է նկարագրում իր ժամանակա-
կից հայոց հասարակութիւնը յիշեալ Մովսէս Խո-
րենացի անունով մարդը, իր հայոց պատմութեան
այն գլխում, որ սկսվում է «Ողբում եմ քեզ հա-
յոց աշխարհ» խօսքերով:

«Վարդապետները տղէտ են և ինքնահաւան,
ինքնակամ կերպով պատուաւոր տեղն ընդունե-
լով, և ոչ թէ Աստուծոյ կողմէն, փողով և ոչ
թէ սուրբ հոգով ընտրված, ոսկիւսէր, նախանձոտ,
զայլեր, որոնք իրանց սեփական հօտը կտոր կտոր
են անում»:

«Կրօնաւորները կեղծաւոր են, գոռոզ, ինք-
նահաւան, սիրում են աւելի պատուաւոր տեղեր,
քան Աստուծուն: Վիճակաւորները դարդակախօս
են, ծոյլ են, գիտութեան և ուսման արհամարհող,
աւետարի և դուրձուկներին սիրող»:

«Աշակերտները դանդաղ են ուսման մէջ և
պատրաստ ուսուցանելու, զեռ. աստուածաբանու-

թեան վրա ոչինչ տեղեկութիւն չունելով, արդէն
աստուածաբաններ են կարծում իրանց:

«Աշխարհականները վայրենի են, կամակոր,
ինքնահաւան, պարծենկոտ, ծաղրող, չարամիտ:
«Չինուորները անիրաւ են, թեթևամիտ, զէն-
քի դաւաճան, ծոյլ, զուարճասէր, անչափաւոր,
աւագակների ընկերակիցներ»:

«Իշխանները ապստամբ, գողերի ընկերակից-
ներ, աւագակներ, ժրատ, ագահ, կողոպտող,
երկիրը աւերող, ստրկաւորի, հեշտասէր»:

«Գաւառուորները ամբողջ կեղծ, խաբեղայ,
կաշառակներ, իրաւաբանութեան անտեղեակ, հա-
ւատարմութեան անարժան»:

«Իւրերը միասին սիրոյ և ամօթի զգացմուն-
քից զուրկ»:

Եւ գիտէք, ընթացող, ինչ արեցին յիշեալ Մով-
սէս Խորենացու հետ նրա ժամանակակիցները,
նրա յանգնութեան համար... սկսեցին նրան
սարսափելի կերպով հաւածել ոչ թէ միայն նրա
կենդանութեան ժամանակ, բայց և երբ նա մե-
ռաւ, նրա թշնամիները հանեցին խեղճի ոսկոր-
ները գերեզմանից, կտոր կտոր արեցին, փշրեցին
այդ ոսկորները և դետի մէջ անեցին:

Ուրեմն տեսնում էք, ընթացող, որքան առ-
ջադիմութիւն է արել հայոց ազգը: Հինգերորդ
դարում ամբողջ հայոց ազգը գող, աւագակ, ան-
պիտան և այլն անուանելու համար հայերը մար-
դուն անխնայ հալածում էին, յետոյ գերեզմանից
գիւղին էին հանում, ոսկորները փշրում ու գե-
տնն անում, իսկ զիսկի միւր պատրաստ կը լի-
նէին և գայլերին կամ շներին տալ.—իսկ տասն
և իններորդ դարի հայերը, որոնք բազմ ունեն
այնպիսի մտաւոր գործիչներ ունենալ, ինչպէս
Սպանդար Սպանդարեան, Պետրոս Սիմեոնեան,
Աւետիս Ալաւանտի, Ալեքսանդր Նալբանդի և
Ազգայն Թովմանիսեան ոչ հալածում են կենդա-
նութեան ժամանակ, ոչ էլ մահից յետոյ գերեզ-
մանից գիւղին են հանում ու ոսկորները ջուրն
անում, երբ որ մի որ և է ժամանակակից հասարակ
մահկանացու հեղինակ համարվելով և և այժմեան

հայերի վերաբերմամբ մասամբ համաձայն լինել
Մովսէս Խորենացու յայտնած կարծիքի հետ հին-
գերորդ դարի հայերի մասին:

Ուրեմն տեսնում էք, ընթացող, որքան քաղա-
քակիրթ են դարձել մեր ժամանակակից, 19-րդ
դարի հայերը, որ նրանք ճշմարտութեան աստղին
այլ ևս անսորում կերպով չեն հաւածում, նրա
գիտել մահից յետոյ այլ ևս գերեզմանից չեն հա-
նում ու ոսկորները չեն փշրում ու ջուրը չեն ա-
ծում, այլ միայն լրագրողների և շարժաթիւթերի
էջերի մէջ աւելի կամ պակաս քաղաքավարու-
թեամբ բանակոււում են,—և դրանով վերջանում
է ամբողջ հալածանքը:

Մէկ մարդ է մնացել միայն մնականում, որ որ-
պէս հնազէտ (արխեօլոգ) դուռ ևս անխախտ
պահպանել է հինգերորդ դարի հայերի սովորու-
թիւնը միտած գործիչների ոսկորները անհա-
գիստ թողնելու,—դա հնազէտ, արխեօլոգ, գերեզ-
մանից փողոց Ալեքսանդր Ներսիսեան է: Բայց
նրան այդ բանը ներքին է, որովհետեւ գերեզման-
ներ փորել նրա մասնագիտութիւնն է: Նա այդ-
պէս էլ արաւ, երբ Ստեփաննոս Նազարեանց
վախճանակցաւ. և որովհետեւ իրաւ չէր կարելի
Նազարեանցի գերեզմանը փորել բառի բուն նը-
շանակութեամբ, մեր այժմեան բարեկարգ ժամա-
նակին, երբ կայ պօլիտիա, հնազէտ Ներսիսեան բա-
ւականացաւ Նազարեանցի գերեզմանը հնազտա-
կան «Փորձ» ամսագրի էջերի մէջ փորփորելով:
Ներսիսեան իսկապէս արաւ մեռած Նազարեանի
հետ նոյնը, ինչ որ արեցին հինգերորդ դարի հա-
յերը Մովսէս Խորենացու հետ: Ուրեմն եթէ մի-
այն Ներսիսեանի վրա նայեմք, կամ եթէ բոլոր ժա-
մանակակից հայերը Ներսիսեանին նման լինէին,
պէտք է կարծէինք որ դեռ հինգերորդ դարում
ենք ապրում: Բաղդաւարեանց այդպէս չէ. Ներ-
սիսեանի հնազարեան, արխեօլոգիական վարմունքի
զէմ այն ժամանակ անմիջապէս բողոքեց Սմբատ
Շահադիղեանի «Չայնը», բաղդաւարապէս մեր
ժամանակակից մնացած գործիչներն էլ ամենեկն

նման չեն Ներսիսեանին: Նրանք, ճշմարիտ է լաւ
հայհոյել գիտեն, կուշտ կուշտ ուշուց տալ գե-
տեն, բայց այնու ամենայնիւ այժմ ամեն բան
վերջանում է զրական բանակոււով, պոլէմիկայով
(մանաւանդ որ տարին վերջանում է և բաժանոր-
դագրութիւն պէտք է բանալ), և երբեք իրանց
չեն թող տալիս ոչ հաւածել մարդուն, ոչ մատ-
նել նրան, ոչ էլ նրա մահից յետոյ նրա գերեզ-
մանը փորել ու միջի եղած ոսկորները զէն ա-
ծել....

Այն, որքան քաղաքաւոր կը լինէր Մովսէս Խո-
րենացին, եթէ նրա ժամանակակիցները լինէին՝
Սպանդար Սպանդարեան, Պետրոս Սիմեոնեան,
Աւետիս Ալաւանտի, Ալեքսանդր Նալբանդի, Ար-
գար Թովմանիսեան և Արթուր Լէյստ:
Նա իր ամբողջ կեանքը հանգիստ կանցկացնէր,
առանց հալածանքի, առանց մատուցութիւնների
և կարող էր վստահ լինել որ մտնելուց յետոյ
էլ ոչ ոք չէր փորի իր գերեզմանը, բացի «Փոր-
ձի» և «Արձագանքի» աշխատակից պ. Ալեքսան-
դր Ներսիսեանից:

Շատ շատ Աւետիս Ալաւանտի կը գրէր նրան
Ալաւանտից հետեւալ նամակը:

«Յարգելի պարոն Մովսէս Խորենացի: Ես միշտ
պատիւ եմ համարել ինձ ձեր դրօշակի տակ ծա-
ռայելու, դուք փոշից հանեցիք և յեղափոխեցիք
մեր գրաբառ լեզուն և ինձ շատ հեռու կը տա-
նէր ազգին մատուցած ձեր բոլոր ծառայութիւն-
ների մի առ մի յիշելը, բայց միայն մի կէտում
ես ձեզ հետ համաձայն չեմ և յոյս ունեմ որ
դուք, որպէս ճշմարիտ ազատամիտ մարդ, կը նե-
րէք ինձ: Ձեր պատմութեան այն զուրկ, որտեղ
դուք յարձակվում էք ամբողջ հայոց ազգի դէմ,
վերաւորեց իմ ազգային զգացմունքին ինքնասի-
րութիւնը:

Աւետիս Ալաւանտի

Եթէ Ալեքսանդր Նալբանդի Մովսէս Խորե-

Չանկց, ճնեցրել է նրա մէջ աւելի նուրբ զգացմունքներ, կենսական աւելի բարձր ճաշակներ, անհասանելի ցանկութիւններ, աւելի բարեկարգ կեանքով, աւելի կոնֆորտով ապրելու ցանկութիւնը, խղի է աղջկայ և իր ծնողները մէջ եղած բոլոր բարոյական, հոգեկան ու մտաւոր կապերը, — և վերջը առանց մի որ և է գործնական հմտութեան, անխնամ, անօրնական շարժումը է նրան վիճակի կամքին:

Եւ ահա մեր դպրոցները այդ տեսակ աննպատակ, պարզ ասելով՝ չբաւարարող մասնութեան համար փնասակար ուղղութեան շնորհով զարգանում է այժմ մեր մէջ պրօլետարիատի մի նոր ձև, մի նոր տեսակ—կրթված, կամ աւելի լաւ է ասել կիսակրթ իրական պրօլետարիատը:

Քանի որ այդ տեսակ պրօլետարիատ մեր իրական դպրոցները սխալ ուղղութեան, նրանց բռնած անհեթեթ ընթացքի շնորհով արդէն կազմվել է, այժմ մնում է մտածել թէ ի՞նչ օրինաւոր ուղղութիւն կարելի է տալ այդ տեսակ ամենալատանգաւոր պրօլետարիատ կազմող կանանց կոնտինգենտին, որպէս զի մի կողմից առաջն առնելը ապագայում այդ տեսակ պրօլետարիատի զարգանալուն, իսկ միւս կողմից գործ, պարապմունք տանք արդէն գոյութիւն ունեցող պրօլետարիատին, հասարակաց օրինաւոր ապարէզ բաց անելը այն օրերըները անհնար է արդէն ուսում ստանալուց յետոյ աւելի մոլորված, աւելի անօրնական են փնայել կեանքի մէջ, քան թէ կրթված մեներին ուսում ստացած չը լինէին, և խլիված չը լինէին իրանց բնական շրջանից:

Այդ հարցը յիշեալ երկու տեսակի տիցն էլ, մենք կը քննենք մեր հետեւեալ յօդուածում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Ամսիս 23-ին Հայոց խումբը ներկայացրեց Մովսէսի «Տարաբնակ» Մովսէսը այդ գրուածքի մէջ, իր սովորական վարպետութեամբ ձեռքում է այն հոգեկան մթնոլորտը, որ պատել էր բոլոր իր ժամանակակից հասարակական կեանքը: Կղերականու-

նացու ժամանակակից լինելը, նա կը գրէր Սպանիա Մովսէսը արեւմտեան հետեւեալ նամակը Բագրատին: «Յարգելի պարոն խմբագիր, յոյս ունեմ կը հիւսիսներէք ձեր երևելի, յարգելի, պատուելի և մեծարելի ամենօրեայ թերթի մէջ իմ և Բագրատի ամբողջ հայոց, տանն և երկու մարդուց բաղկացած երիտասարդութեան բողբոջը պ. Մովսէս խորհրդագր. «Հայոց պատմութեան» այն գլխի դէմ, որ սկսվում է «Ողբում զքեզ հայոց աշխարհ» բառերով, և որի մէջ այդ պատմաբանը զիսկնում է հայոց ազգի բոլոր դասակարգերի պատմական Յոյս ունեմ որ երկու տարվանից այլ ես ոչ ոք հայերից չի առնի պ. Մովսէս խորհրդագր. զիբոջը, ոչ կենտրոնական գրավածաւանդից, ոչ էլ վեհնայից Մովսէսի արեւմտեան իրերը կը տայ: Եւ զարմանում եմ որ մեր հայագէտ Մկրտիչ Էմին և զերմանացի հայագէտ Լաուէր չամաչեցին թարգմանել այդ տեսակ զիբոջը եւրօպական լեզուով մի զիբոջ որ ի է հայտնաբերում հայերի բոլոր դասակարգերի դէմ: Որքան ինչ կարծիք պէտք է կազմին եւրօպացիք մեր մասին կարգաւոր Մովսէս խորհրդագր. զիբոջը:

Արեւմտեան Բագրատին

Սպանիա Սպանիա, եթէ նա իր ամենօրեայ թերթով ժամանակակից լինելը Մովսէս խորհրդագր. նախաբանից այդ նամակը ստանալուն պէս, անմիջապէս կը սկսէր հրատարակել «Ազատ խորհրդագրութիւններ» վերնագրով յօդուածների մի շարք, հետեւեալ բովանդակութեամբ:

ԱԶԱՏ ԽՈՐՀՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

IXXXVXVIIVII

Հրատարակատուութիւնը մի նշանաւոր գործ է, որ մենք բացատրելիք իրեն բուն նշանակութեամբ մեր շարք յօդուածներում: Հիտակայէս յօդուածների այդ շարքը մեր ամենօրեայ թերթի ընթացքում պարզ պիտի տեսնէին և անշուշտ տեսած են արդէն և զարձեւալ աւելի պարզ կը տեսնեն ապագայում, երբ կը շարունակենք

թերթը ինչպէս մի ցանց պատել էր ամբողջ Յրանսիան... Նրա արբանակները ամուր կերպով հաստատուել էին թէ պարտաւոր, թէ վերջին դեղատոմար խորհրդում հակա ինչ որ ամեն դասակարգերի մէջ զգալի էր կղերի գերիշխանութիւնը: Ամբողջ յիմարութիւնը և կարծատեսութիւնը, ի հարկէ, շատ նպատարաւոր էին նրանց գործունէութեան համար: Տարաբնակ մի հաւաքական սիւսար է, որ իր մէջ պարունակում է իր դասակարգին պատկանող բոլոր պակասութիւնները: Նա կամենում է անսահման կերպով հրամայել, և չէ բաւականանում իր խղճալի գրութիւնով, նա զգալի պատերազմը յայտնում է ամբողջ հասարակութեան և անխորհրդ է, երբ յողովում է: Տարաբնակ այն աստիճանի վաղաշուտ բնաւորութիւն ունի, որ մինչև անգամ հակառակ իր կամքի, այդ երևան է զալիս, նրա համար սուրբ բան չը կայ, թէ և Աստուծոյ անունը նրա բերանից չէ հեռանում: Աստուծապաշտութիւնը և բարեպաշտութիւնը միջոց է նրա համար, մի միջոց է միայն, որ տանում է դէպի նրա նպատակը: Չգաղմունքները ազատ թողնելու համար, ասում է նա, կարելի է խնամարար լայնացնել: Եւ նա երբեք չէ շեղվում իր այդ սկզբունքից...»

Տարաբնակ պարոն Արամիանի թոյլ գերբերց մէկը պէտք է հարուել: Նա այդ գերբ սուր կերպով է խաղում և ուշադրութիւն է դարձնում նրա բազմատեսակ բնաւորութիւններից միայն մէկ կողմը վրա, այն է վաղաշուտութեան վրա: Իսկ միւս կողմերը պ. Արամիան թերի է թողնում: Տարաբնակ պ. Արամիանի ամբողջութիւնը չէ կարելի համարել: Նրա ձեռքը, խնամքը այն աստիճանի գրաւիչ չեն, այնպէս որ զարմանալի է թէ ինչպէս մի այդպիսի Տարաբնակ ամենքը աչքը չլացրել է: Մի քանի տեղերում միայն ազգու խաղաց: Ծափահարութիւնները՝ ինչպէս միշտ: Սառն էին բոլոր միւս մասնակցողները, բացի օր. Վարդուհայ Գօրիսի գերբում. սա արդէն շատ տաք էր... չափազանց տաք էր... օրերը երբեք չէ մոռանում իր վողմիւրները ստեղծողները: Պ. Մկրտչեանց (Օրգոն) բաւարարողիչ էր միայն վերջին գործողութիւններում. առաջիններում նա շատ թոյլ էր: Առաջին գործողութեան այն տեսարանը, երբ հարցնում է «Տարաբնակ» առողջութեան մասին, նա բոլորովին ուրիշ կերպով անցկացրեց, որ միանգամայն հակառակ է կամեղիսի բովանդակութեան: «Ինչո՞ւ մարդ» նա մի տեսակ հեղինական ձևով է ասում, որ բոլորովին

անսպասելի է Օրգոնի կողմից: Միւս մասնակցողների վրա այս անգամ յարմար չենք համարում խօսել: Կարծես մեր թատրոնում կլակ է մուտ գործունէութեան համար ցաւալի մի երեւոյթ կը լինէր այդ, եթէ ճշմարիտ շարունակ այդպէս լինի: Գիտարանում ենք մինչև անգամ ենթադրել, բայց ուրիշ տեսակ ինչպէս բացատրել գալլի և օր. կայ ի պիտեայի գործողութեան ընդմիջող անվերջանալի ծափահարութիւնները:

Nemo

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղական լրագրողները հաղորդում են, որ թիֆլիսեցի վաճառական Ս. Եղիազարեան, որ անձնապատկանութեան փորձ արած, խրելով խանչալը իր փորի մէջ, արդէն վախճանվեցաւ, չը նայելով որ վիրաւորվածին անմիջապէս տարան քաղաքային հիւանդանոց և բժշկական օգնութիւն տուցին:

ՎԵԼԻՍՅԻՆԻԷ գիւղից մեզ գրում են, որ այդ տեղի հայոց ծխական դպրոցը դեռ ևս փակ է:

Կախելի կողմերից մեզ գրում են հետեւեալը, հոկտեմբերի 15-ից: «Այգեքաղը ամեն տեղ վերջացել է արդէն. այժմ քաղվում է միայն թագաւորական կառուածքը: Այս տարվայ Կախելի գիւղի թիֆլիս է և անհաս Գիւնվաճառները մտնում են ամբարանոցները, մտանները, ճաշկուտ են գինին,— և հեռանում են առանց մի թունգի անգամ առնելու: Ով որ նստելին տարիներում մի տալ զինի է ունեցել, այժմ պարտաստ ունի տաս սալկիով, բայց ինչ արած որ մուշտարի չը կայ: Այս տարվայ Կախելի գինին թէ և գոյնով հիւսալի է, բայց համով և հոտով լաւ չէ, ուստի և շատ էժան է: Կարծում են որ այդ թիֆլիս գինին ամառը կը քաղցրանայ, բայց դա էլ դեռ ևս ենթադրութիւն է: Չարմանալի է, որ թէ և շատերը այգեկութիւն նոր վերջացրին, այնու ամենայնիւ խաղողը ոչ մի տեղ լաւ չը հասաւ:»

ՄԵՂՐԻ գիւղից մեզ հաղորդում են, որ այս տարի բամբակը շատ սակաւ է այդտեղ, բայց առատ խաղող կայ: Միայն այգեգործութիւնը, թիֆլիսից կարծիքով, կարող է մեղրեցիները ընկած անտեսական դրութիւնը բարելո՞ւր:

մար, այլ նստած ենք խմբագրատանը և սպասում ենք բաժանորդներին: Առ այժմ այսքան, հետեւեալ անգամի թողով գործի աւելի մանրամասն բացատրութիւնը:

Սպանիա Սպանիայի

Եթէ Պետրոս Միմօնեանց Մովսէս խորհրդագր. ժամանակակից լինելը, նա զիստուր ասողի պէս երևացող քսան և հինգ տարի գոյութիւն ունեցող իր լրագրի մի համարում անմիջապէս կը ստղեր հետեւեալ բովանդակութեան առաջնորդը (այժմ ամեն մարդ առաջնորդը գրել է սովորել):

Թիֆլիս 5-րդ դարում

«Մենք բաղմից ասել ենք որ, գրիչ վերառնելիս, մի սրբազան պարտաւորութիւն է խոսեմ հրապարակաւ: Եւ պատմաբանի կողմից նախ ճանաչել իր անձն և ապա ի հրապարակ ելնել և ըստ այն գործել: Վերջին ժամանակներս նկատելի է որ մեզանում մի շեշտակար օտարութիւն է դարձած որ ամեն մի թիֆլիս, համարակ, տղէտ, տղարամիտ մանուկը ըստ կարգին ուսումնասիրած լինելու և ձեռնամուկ է լինում ամբողջ ազգի երեսին անպատուութեան դրօշմը դրօշմելու: Թող փչելը խեղճ ժողովրդեան աչքերին գիւրիս է, քանզի տղիտուութիւնն ու տղայամտութիւնն հեշտ աչքով է նախ ամենալուրջ լնդիներին լուծման վրա, առանց եղելութեանց բուն պատճառներն քննութեան առնելու: Ամբողջ ազգի վիրաւորելով, այդպիսեաց համար ինչ փոյթ թէ ժողովրդոց սիրան ու միտքը պիտի մոլորվին: Ժողովուրդն իրանց զարգութեամբն ի մոլորութիւն, յանդուան և ի խորտարատ ապականութեան պիտի մատնվի, բայց ինչ փոյթ ևս ասելիս:»

Պետրոս Նոր-Նախիջևանցի

Իսկ Արզար Յովհաննիսեան, եթէ ժամանակակից լինելը Մովսէս խորհրդագր. դեռ կը սպասէր որ սա մեռնի և այնուհետև նրա մահից յե-

Մեզ գրում են ՄԵՂՐԻ գիւղից հետեւեալը: «Մեզանում մի սովորութիւն կայ, որ խոր արմատներ գցելով, զգալի կերպով աշակերպում է մեր սերունդը. դա վաղահաս ամուսնութիւնն է: Այդ սովորութեան առաջն առնելու համար շատ տարիներ տեսակ տեսակ ջանքեր գործադրվեցան, մինչև անգամ տեղական բարբառով «Գիւղական նշանադրութիւն» վերնագրով մի պիտեայ ներկայացրինք, ցոյց տալու համար մեղրեցիների կեանքի պատկերը, այդ կեանքի այլ և այլ սովորութիւնների կորստաբեր հետեւեալներով: Բայց բոլոր ջանքերը գուր անցան մեծամասնութեան համար: Թաճակ է պատահում, որ մի 30 տարեկան մարդ պատվում է մի տաս տարեկան աղջկայ հետ, և այն էլ մի 2,000 ռուբլու կարողութեան ձեռք բերելու նպատակով: Պարզ է, որ տաս տարեկան երեխայ—աղջիկը ինչ լինել անկարող է, որդեծնութեանն անընդունակ է: Ե՛րբ, վերջապէս, կարգելի մեզանում այդ տեսակ բարբառոս սովորութիւնը: Վարդահայ ամուսնութիւններին կարելի է վերադրել այն իրողութիւնը, որ 150 անից բազկացած մեր գիւղում գրեթէ ամեն տարի մի մի ծուխ կատարելապէս ոչնչանում է:»

Ղաղախ գաւառի ԳԱՐՎԱՆՍԱՐԱՅ գիւղից մեզ գրում են: «Մեր գիւղում, ճշմարիտ է, գողութիւններ գրեթէ չեն պատահում, բայց գիւղի բընակները շատ քաղ ու ճարպիկ են աղջիկ փախցնելու: Անցեալները մի երիտասարդ մի աղջիկ է փախցնում, որ միւս առաւօտ կրկին վերադառնում է իր ծնողների մօտ: Ամիջապէս աղջկայ ծնողները բռնում են երիտասարդին և այնքան ծեծում են նրան, որ մահվան դրան են հասցնում ողորմելու: Մեր կեանքում կատարելապէս տիրապետում են թաթարական շարք ու վարքերը:»

Պետերբուրգում հրատարակվող «ВѢСТНИКЪ ЕВРОПЫ» ուսումնասիրել ներկայ թիւի հոկտեմբերի տետրակը վերին աստիճանի հետաքրքիր է իր բովանդակութեամբ: Այդ տետրակի մէջ զվարարապէս իրանց վրա ընթերցողի ուշադրութիւնը դարձնում են հետեւեալ յօդուածները. նախ՝ նշանաւոր գրող Ե՛ՆԵՂՐԻՆԻ «Пестрыя пшєма» աստիճանի մի տիկնոջ նամակներ Պարսկաստանից «Персидскій эндерунъ» վերնագրով, յետոյ Բօբօրիկի-նի «Дюма—сынъ въ новомъ освѣщеніи» յօդուածը և, վերջապէս, մի անյայտ հեղինակի թե-

տոյ երիցեանին կը պատուիրէր հայտնաբերում լի յօդուած գրել մեռածի մասին, իսկ Արթուր Լէյստին կը պատուիրէր արտասահմանում իր հրատարակվող «Հայոց գրադարան» անունով զբընում գրել մի յօդուած հետեւեալ բովանդակութեամբ:

«Մովսէս խորհրդագր. կրթված լինելով յունական դպրութեան վրա, չէր հասկանում իր ժամանակակից հայերի բուն հոգեկան պահանջները և իր կարծիքները ազգի դէմ կարի խիստ էր արտայայտում, ուստի ոչ թէ միայն շատ թշնամիներ ունեցաւ կեանքի ժամանակ, այլ իր մահից յետոյ նրա գերեզմանը փորեցին հայերը և ոսկորները մասամբ քամու տուեցին, մասամբ դեռ մէջ ածեցին: Մովսէս խորհրդագր. օտար, յունական դպրոցի ազդեցութեան տակ կրթված լինելով, մի մեծ բարոյական վիչ էր բաժանում նրան հայոց ազգից:»

Արթուրուս Գերմանացի

Եւ այդ տեսակ քան ձեռ պարունակող զիբոջը նա Լէյստի ձեռքով Հռոմում կամ Աթենքում կը հրատարակէր և կը զնէր գրքի վերնագիրը «Հայոց գրադարան»:

Արթուրուս Գերմանացի

Այս օրքան բաղաւոր կը լինէր Մովսէս խորհրդագր. եթէ այնպիսի սիրելի ժամանակակիցներ ունենար, ինչպէս Սպանիայեան, Միմօնեան, Արամեան, Երիցեան, Նախիջևան, Յովհաննիսեան և pardessus le marché Արթուր Լէյստ: Նա իր ամբողջ կեանքը հանգիստ կանցկացնէր, առանց հաշտանքներին ենթարկվելու, և զերեզմանի մէջ էլ նրա ոսկորները հանգիստ կունենան:

Այս ընթերցող, հոգիս զմալվում է երբ մտածում եմ առաջադիմութեան օրքան հակապական քայլեր են արել հայերը հիւսիսեւոր դարից յետոյ:

ԱՍԻԱՅԻ

